

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

995-9

Հ. Խ. Ա. Հ.

ԱՆՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳՈՂՈՎՐԴԻԿԱՆԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՆԻ  
ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ, ԳՐՔՈՒՅՑ Խ 8

ՍԱՆ-ՀԱՍՏԱՏՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԿԻ  
ՍԱՆ-ԼՈՒՆ ՁԵ/ԲԱԺԻՆ

ԲԺՇԿՈՒՀԻ ՅԵԼ. ԺԱԼԵՎԹՄՅԱՆ

# ՄԱՐԴՈՒ ՃԻՃՈՒՆԵՐԸ

— — —

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆ-ԺՈՂՈՎՐԴՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926



Հ. Խ. Ս. Հ.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ԳՐՔՈՒՅՑ № 8

ՍԱՆ-ՀԱՄԱԶԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ  
ՍԱՆ-ԼՈՒՆ ՅԵ/ԲԱԺԻՆ

• ԲԺՇԿՈՒՀԻ ՅԵԼ. ՖԱԼԱՆԹԱՐՅԱՆ

616.962

# ՄԱՐգՈՒ ՃԻՃՈՒՆԵՐԸ

A T 603  
4602

---



**ՀԱՅՊԵՏՊՈԼԻԴՐԱՑԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ**

**Գրառ. 813 ր. Պատվ. 5395 — Տիրաժ 5000**

## ՄԱՐԴՈՒ ՃԻՃՈՒՆԵՐԸ

### ՃԻՃՈՒՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Արանից մի քանի տարի առաջ շատ քչերը գիտեյին ճիճուների մասին և շատ քչերն եյին մտածում նրանց մասին. բայց վերջին տասնամյակում շատ բան փոխվեց: Պատերազմի, գաղթի, քաղաքացիական և ազգամիջյան կոիվների չնորհիվ ազգարնակությունն աղքատացավ, հիվանդություններն ու սովը լայն ծավալ ստացան, կենցաղի պայմանները վատացան, աշխատանքի պայմանները ծանրացան, մարդիկ դռնան ալելի խոցելի և սկսեցին շատ հեշտությամբ վարակվել ամեն տեսակ վարակիչ հիվանդություններով, ի թիվս վորոց և ճիճուներով:

Հայաստանում ես շատ տարածված են ճիճվային հիվանդությունները: Տրոպիկական հիվանդությունների Յերևանի ինստիտուտում 2000 անձ յենթարկվել են քննության. Դրանցից առողջ են յեղել միայն 101 անձ, մնացածները բոլորն ել հիվանդ են յեղել ճիճուներով:

Կան տեղեր, վորտեղ ազգարնակության 100 % ել հիվանդ ե ճիճուներով:

1924թ. Հայաստանում բժիշկներին դիմել  
են ձիճուներով հիվանդ 10,487 անձ: Բայց քա-  
նիսը կան, վոր չեն դիմել բժիշկներին և չեն  
ցուցակագրվել:

Ձիճուները մի այնպիսի մեծ չարիք են հա-  
սարակության համար, վոր անտես անել նրանց  
չի կարելի, դրա համար ելայժմ դրանց վրա մեծ  
ուշադրություն ե դարձնվում:

### ՎՈՐՏՏԵՂ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ ՁԻՃՈՒՆԵՐԸ

Ձիճուները սովորաբար ապրում են մարդու  
և այլ կենդանիների աղիքների մեջ. բայց կարող  
են ապրել և թռքերի մեջ, լյարդի, մկանների,  
ուղեղի, աչքի, սրտի, յերիկամունքների, փայ-  
ծաղի և ուրիշ գործարանների մեջ: Առհասա-  
րակ, մարդու մարմնի մեջ չկա տեղ, վորտեղ  
այս կամ այն ձիճուն չկարողանա բնակություն  
հաստատել:

Յերեխ ձեզանից շատերը տեսած կը լինեն  
մորթած վոչխարի լյարդի մեջ տերեւանման  
վոքըի ձիճուներին, վորոնք խցկում են լեզու-  
բօլոր ճանապարհները:

Մորթած վոչխարի թռքերի մեջ յերբեմն  
յերեւում են կարմիր-սպիտակավուն ուռուցք-  
ներ. շոշափելիս մենք այդ ուռուցքների մեջ նը-

կատում ենք կոչո հանգույցներ. յեթե ուժեղ  
սղմենք, այդ ուսուցքների միջից դուրս կը գան  
թելանման ճիճուներ:

Զեզնից ո՞վ չի տեսել վոչխարի պտտող հի-  
վանդությունը. դրա պատճառը վոչխարի ուղե-  
ղի մեջ ապրող ճիճուն ե:

### Ի՞նքով են ՍՆՎՈՒՄ ՃԻՃՈՒՆԵՐԸ

Ճիճուներն ապրում են մարդու կամ կենդա-  
նու աղիքների մեջ և կերակրվում են միենույն  
սննդատու նյութերով, վորոնցով սնվում ե  
մարդը կամ ուրիշ կենդանին: Այդ ե պատճառը,  
վոր ճիճվով հիվանդ մարդը դայլի ախորժակ է  
ունենում, շատ ե ուտում, բայց կերածն ոգուտ  
չի տալիս ուտողին, այլ կլանում ե ճիճուն. դրա  
համար ել հիվանդը, չընայած շատ ուտելուն,  
միշտ ել նիհար ե լինում և միշտ ել քաղց ե  
զգում:

Ճիճուները միշտ ել չեն բավականանում  
աղիքների մեջ յեղած նյութերով, այլ յերբեմն  
նրանք կպչում են աղիքի պատին և ծծում աղիքի  
պատի հյութերը կամ հենց արյունը: Դրա հա-  
մար ել նրանք կոչվում են մակաբույծ, այսին-  
քը՝ ուրիշի հաշվին ապրող:

## ՃԻՃՈՒԵՐԻ ՏՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ

Ճիճուները, վորապես կենդանիներ, սնվում  
են և արտադրում են կեղտոտություններ ու  
թույներ, վորոնք, ծծվելով սննդանյութերի  
հետ, անցնում են հիվանդի արյանը և տարած-  
վում ամբողջ մարմնով: Ճիշտ է, թեև այս ար-  
տադրություններն իրենց քանակով քիչ են,  
բայց և այնպես առաջացնում են գլխացավ, ցըն-  
ցումներ, գրգռականություն, փորլուծություն,  
հիվանդը նիհարում է, ուժերը կորցնում, չի  
ուզում աշխատել և այլն:

Յերբեմն ճիճուները թվով այնքան շատ են  
լինում, վոր վիակում են աղիքների անցքը, կամ  
պատում աղիքներն ու անցնում վորովայնի  
խորշը. յերբեմն մտնում են լյարդի մեջ և փա-  
կում լեղու խողովակները, վորից հիվանդը  
դեղնություն է ստանում:

Ճիճուները, ծծելով հիվանդի արյունը,  
առաջացնում են հիվանդի արյան պակասու-  
թյուն:

Ճիճուները կծելիս վիրավորում են աղիք-  
ների լորնձաթաղանթը և այդպիսով նպաստում  
են աղիքների մեջ յեղած մանրեներին վարակեր  
աղիքները զանազան հիվանդություններով,

որինակ՝ վորովայնի տիֆով, կանիճով, աղիք-  
ների պալարախտով և այլն . . .

Ճիճուներով հիվանդներն ավելի շատ են  
հիվանդանում ուրիշ տկարություններով և  
ավելի շատ են մեռնում զանազան հիվանդու-  
թյուններից, քան նրանք, վորոնք ճիճուներ  
չունեն:

### ՃԻՃՈՒՆԵՐԻ ՑԵՍԱԿՆԵՐԸ

Ճիճուները բաժանվում են յերկու խմբի՝  
կլոր և տափակ, վորոնք զանազանովում են միմի-  
անցից վոչ թե միայն արտաքին տեսքով, այլ և  
բազմացման յեղանակով: Կլոր ճիճուներն ունեն  
եղ և արու. արուն բեղմնավորում է եղին, վորը  
բեղմնավորվելուց հետո դնում է ձվեր. իսկ տա-  
փակ ճիճուները յերկսեռանի յեն, այսինքն՝  
միենույն ճիճուն ունի թե արական և թե իգա-  
կան սեռական գործարաններ. նրանց մեջ առան-  
ձին-առանձին եղ և արու չկան:

### Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՄԱՐԴԻԿ

Ճիճուների ձվերը, վորոնք այնքան փոքր են  
վոր հասարակ աչքով չեն տեսնվում, հիվանդի  
կեղտության հետ ընկնում են հողի մեջ, այն-  
տեղից անցնում ջրին կամ կանաչեղենին, այ-  
նուհետեւ ուրիշ կենդանիներին և մարդուն:

Մարդիկ կարող են վարակել և իրենք իրենց .  
անմաքրասեր մարդիկ հետույքը քորելուց հե-  
տո ձեռքերն առանց լվանալու ուտում են կամ  
շրթունքները որբում և այդպիսով հետույքի  
մոտ գտնված ճիճվի ձվերը փոխանցում իրենց  
բերանը և նորից վարակվում : Ճիճվի ձվերն  
ընկնում են մարդու բերանից նրա ստամոքսը ,  
վորտեղ ձվի պատյանը պատովում և և նրա մի-  
ջից դուրս ե գալիս ճիճվի թրթուուր (փոքրիկ  
ճիճուն) . անցնելով աղիքների մեջ , թրթուուր  
դառնում ե ճիճու և սկսում ձու դնելը : Այս ձուն  
նորից վարակում ե մարդկանց նույն ճանապար-  
հով :

Կլոր ճիճուների բազմացման առանձնա-  
հատկությունն այն է , վոր պետք ե ճիճվի ձուն  
անպայման ընկնի մարդու բերանը , այստեղից  
ստամոքսը և ապա ճիճու դառնա ավելիքում , այլ  
կերպ կլոր ճիճուն չի բազմանում , այսինքն՝  
աղիքների մեջ յեղած ձվից անմիջապես ճիճու  
չի դուրս գալիս հենց աղիքի մեջ . ձուն պետք է  
աղիքից մի կերպ ընկնի մարդու բերանը , հետո  
ստամոքսը , աղիքը և այդ վերջինում այսպես  
շրջան գործելուց հետո դառնա ճիճու :

Այս տեսակետից կլոր ճիճուներով վարակ-  
մանը շատ ե նպաստում միենալույն անկողնում մի  
քանի հոգու միասին քնելը . հիվանդի քորում և

իր հետույքի անցքը կամ ձեռք է տալիս իր կեղ-  
տոտ սպիտակեղենին և կեղտոտ ձեռքերը քսե-  
լով իր մոտ քնածներին կարող է վարակել նր-  
բանց ևս :

### ՏԱՓԱԿ ՃԻՃՈՒՆԵՐ

Տափակ ճիճուները բաժանվում են յերկու  
խմբի . յերիզորդներ և ծծողներ :

Յերիզորդները կոմ ժապավենաձև վորդերը  
դուրս են դալիս հիվանդի աղիքից ձվերով լիքը  
կտորներով, կեղտոտության հետ միասին կամ  
առանց նրա :

Ծծողները կոչվում են այդպես նրա համար,  
վոր ունեն ծծող գործարաններ, վորոնցով նը-  
րանք պինդ կպչում են հիվանդի մարմնի այն  
մասին, վորտեղ գտնվում են նրանք, և ծծում  
հիվանդի սննդառու նյութերն և այլ հյութերը :

### ՏԱՓԱԿ ՃԻՃՈՒՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԱՌԱՆՉ- ՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԸ.

Տափակ ճիճուն ունի գլուխ և պարանոց,  
վորից զարդանում են նորանոր կտորներ—(ան-  
դամիկներ) : Այդ անդամիկներն, ինչպես վերին  
ասացինք, ունեն թե արական և թե իդական սե-  
ռական գործարաններ, մեկ անդամիկը բեղմնա-  
վորում է մյուսին . բեղմնավորված ձուն անմի-

չապես ճիճու չի դառնում . այլնա պետք է ընկնի  
մի ուրիշ կենդանու մեջ, զարգանա այս կենդա-  
նու մի վորեւե գործարանում կամ մսի մեջ . այս  
կենդանու վարակված հում միուր կամ լավ չե-  
փած գործարանն ուտելուց հետո մարդու աղիք-  
ների մեջ փոքրիկ վորդուկը դառնում է ճիճու  
այդպիսով կենդանիները դառնում են միջնորդ-  
ներ : Յուրաքանչյուր տափակ ճիճու ունի իր միջ-  
նորդը և իր տերը . միջնորդի մեջ ճիճուն ունե-  
նում է ուրիշ ձև և ուրիշ մեծություն : Ճիճվի  
ձուն միջնորդի աղիքների մեջ չի զարգանում ,  
նա զարգանում է միջնորդի մկանունքների  
(մսի) կամ ուրիշ գործարանների մեջ :

Ավելի լավ հասկանալի դարձնելու համար  
բերում ենք մի որինակ . վերցնենք մարդու մեջ  
ապրող յերիզորդերից տավարի ճիճուն . յեթե  
մարդու կեղտուտությունների հետ դուրս է յե-  
կել այս ճիճվի ձվերով լիքը կտորը և այդ ձվե-  
րից մեկը նորից ընկել է միևնույն մարդու կամ  
ուրիշ մարդու բերանը, այդ ձուն՝ կուլ տվող  
մարդու աղիքների մեջ ճիճու չի դառնա, ինչ-  
պես դառնում է կլոր ճիճվի ձուն . տափակ ճիճ-  
վի կուլ տված ձուն առանց փոփոխության  
դուրս կը գնա այդ մարդու աղիքների միջից :

Բայց յեթե այդ ձուն կուլ տան յեզը կամ  
կովը, այն ժամանակ ձվի պատյանը կլուծվի

կովի կամ յեղի ստամոքսում և ձվից աղիքի մեջ դուրս կ'գտ փոքրիկ վորդուկ. այդ վորդուկը ծակում է աղիքի պատը, մտնում արյան մեջ և անցնում կենդանու մկանունքներին ու կանգ առնում այդտեղ:

Մսի մեջ վորդուկը փաթաթվում է պատյանով, վորի մեջ հեղուկ է լցվում. այս վերջինը պաշտպանում է վորդուկին, թե իր պատյանի և թե չբջապատի ճնշումներից: Այստեղ պատյանի մեջ զարդանում է վորդուկի գլուխը: Հասարակ աչքով տեսնել հեղուկով լցված և ճիճվի գլուխը պարունակող բշտիկը չի կարելի:

Յեթե այդպիսի հիվանդ կենդանուն ժորթեն և ուտեն նրա վարակված հում միուր, հեշտությամբ կը վարակվեն այդ միս ուտողները, յեթե լավ չեփեն միուր կամ լավ չտապակեն. իսկ յեթե լավ յեփեն ու տապակեն, այն ժամանակ այդ բշտիկն ու նրա միջի ճիճվի գլուխը կը վոչնչանան ու մարդուն վոչ մի վնաս չեն հասցնի:

Բայց կան մարդիկ, վորոնք շատ վատ սպազություն ունեն, ուտում են հում կամ լավ չեփած ու շտապակած միս. իհարկե և կուլ են տալիս մսի մեջ յեղած ճիճվի գլուխը, վորը ստամոքսի մեջ ազատվում է իր պատյա-

նից և անցնում ուտողի աղիքներին. այստեղ  
ճիճվի գլուխն իր սուր կարթերով կամ ծծան-  
ներով կպչում ե աղիքի պատին և սկսում զար-  
գանալ ու տալ կտորներ, վորոնք հաս-հաս  
դարզանալով մնում են միմիանց կպած և նա-  
յած ճիճվի տեսակին, կարող են այնքան շատա-  
նալ, վոր ճիճուն մի քանի արշին յերկարու-  
թյուն կարող ե ունենալ:

Այսպես ուրեմն մենք տեսանք, վոր  
կլոր ճիճուներով մարդ կարող է վարակվել ի-  
րենից կամ մի ուրիշից, իսկ տափակ ճիճունե-  
րով մարդ կարող է վարակվել այն ժամանակ,  
յերբ այդ ճիճվի ճուն անցնի ուրիշ կենդանու-  
մակ մեջ և մարդն ուտի այդ տեսակ կենդանու-  
հում միսը:

Այժմ տեսնենք թե Հայաստանում ինչ-  
պիսի ճիճուներ են տարածված և ինչ նշանա-  
կություն ունեն նրանք:

---



Արքային Ակադեմիա

## I. ՎԼՈՐ ՃԻՇՈՒՆԵՐ

### Ա. ՄԱՐԴՈՒ ԱՍԿԱՐԻԴՅԸ (ԴԱՆԴՈՒԹԻՒ ՃԻՇՈՒ) (Նկար 1.)

Մարդու ասկարիդը նման է սովորական վորդին, կլոր ե, սպիտակ կամ բաց կարմրավուն գույնի, յերկարությամբ մեկ քառորդ արշինից մի քիչ ավել: Կա եզն ու արուն: Եզն ավելի յերկար ե քան արուն: Համարյա բոլոր կլոր ճիճուների արուն տարբերվում է եղից արտաքուստ նրանով, վոր արվի պոչը կեռ ե ու վոլորված, իսկ եղինը ուղիղ այս նրա համար ե, վոր սեռական հարաբերության ժամանակ արուն հնարավորություն ունենա փաթաթվել եղին և ամուր սպահել նրան:

Եզր բեղմնավորվելուց հետո դնում է ձրվեր. ամեն մի ասկարիդ կարող է որական մինչեւ 200.000 ձու դնել, վորոնք լուրս են գալիք մարդու կեղտոտության հետ միասին. մի վորոշ ժամանակ, մոտավորապես 2-4 շաբաթ, անցնելուց հետո ձվի մեջ զարդանում է ճիճվի վորդուկը և միայն այդ ժամանակ ձվերը դառնում են վարակիչ: Այսպիսի զարդացած ձուն կուլ տալուց հետո նրա պատյանը պատովում է, վորդուկն ազատվում: Սա անմիջապես

զարգացած ճիճու չի դառնում, այլ ծակելով  
մարդու աղիքը, անցնում է արյան։ Այստեղից  
նա արյան հետ անցնում է թոքերը, թոքերից ել  
բերանը։ Բերանից նա նորից անցնում է ստա-  
մոքսը և ապա աղիքները, այստեղ նա հաս-  
տատվում է, մեծանում ու սկսում նորից ճու  
դնել։

Ահա թե վորքան մեծ շրջան է կատարում  
ճուն և նրանից դուրս յեկող վորդուկը մինչեւ  
հասած ճիճու դառնալը։

## Ի՞Չ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ ՃԻՃՎՈՎ ՀԻՎԱՆԴԼ

Հիվանդի սիրտը տրորում է, խառնում,  
յերբեմն փսխում է, փորը ցավում է, ատամ-  
ները կրճտացնում քնած ժամանակը։ Հիվանդի  
մաշկը յերբեմն մոլոքոր կոչվող հիվանդության  
պես քոր է գալիս և դուրս տալիս։ Գլխացավ  
է լինում։ Հիվանդի ախորժակը լավ է, չառ և  
ուտում, բայց միշտ նիհար է լինում, կերածը  
լավ չի մարսում, մերթ լուծ է ունենում, մերթ  
փորկապություն։

Ճիճուն, յերբեմն ծակելով աղիքները, դուրս  
է գալիս և մտնում հիվանդի ուրիշ գործարան-  
ները և վնասում նրանց։ Թոքերի միջոցով անց-  
նելիս ճիճվի փոքր վորդը կարող է կանգ առնել

թոքերի մեջ, մանավանդ, յերբ նրանք շատ են,  
և առաջացնել թոքերի թարախային բորբոքում։

Վերը նշած հիվանդագին յերեռյթների  
պատճառը կարող են լինել աղիքների մեջ գրտ-  
նըվող վոչ միայն կենդանի ճիճուները, այլ և  
զանազան դեղեր ընդունելուց հետո սատկած,  
բայց աղիքից դեռ դուրս չեկած ճիճուները·  
դրա պատճառն այն է, վոր սատկած ասկարի-  
դի մարմնի մեջ յեղած թույնն աղիքների հյու-  
թի աղղեցության ներքո դուրս ե գալիս ճիճվի-  
միջից և լցվում աղիքի մեջ ու սննդամունյու-  
թերի հետ ծծվում արյան մեջ, վորից և հի-  
վանդը թունավորվում է։ Ուստի անհրաժեշտ  
է, ճիճվին դեղով սպանելուց հետո անպայման  
ընդունել լուծողական, վոր սատկած ճիճուն  
դուրս գա աղիքից և չը թունավորի իր տի-  
րոջը։

## Բ. ՇԱՆ ԱՍԿԱՐԻԴ

Սա նման է մարդու ասկարիդին, բայց  
փոքր է. մարդն ել կարող ե ունենա, յեթե կուլ-  
տուասկարիդի ձվերը։

Շան ասկարիդի ձուն կարող ե կեղուսու-  
թյան հետ կպած լինել շան մազին և շանը  
մեռք տալուց հետո անլվա ձեռքերը բերանը

տանելիս, կարելի յե տանել բերանը և ձեռքին կողած ձուն ու այդպիսով վարակվել:

### Գ. ԿԱՏՎԻ ԱՍԿԱՐԻԴ

Սա նման է շան ասկարիդին, բայց ավելի բարակ է. գրանով մարդ նույնպես կարող է վարակվել, ինչպես և մարդու կամ շան ասկարիդով:

Թե շան և թե կատվի ասկարիդի տված հիվանդագին յերևույթները նման են մարդու ասկարիդի տված նշաններին:

### 2. ՄԱԶԱԳԼՈՒԽ (Նկար 2.)

Այս ճիճուն ունի 4-5 սանտիմետր յերկարություն, նրա մարմնի հետեւի մասը հասու է,



A  
T  
ԿԵՐՈՇ

Նկար. 2. ՄԱԶԱԳԼՈՒԽ  
ԿԵՆՏՐՈՆԸԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ № 2  
ՀԱՅԱՍՏԱՆԻ

իոկ առաջի մասը բարակ, այնպես վոր, դվին  
ծայրը նման է մազի, դրա համար ել կոչվում  
է մազագլուխ. այս ճիճվի հատկությունը կա-  
յանում է նրանում, վոր բնակվում է մարդու  
աղիքների մեջ և կպչում աղիքի պատին շտ  
ամուր: Ճիճուն իր բարակ ծայրով ծակում է  
աղիքի լորձնաթաղանթը, մի վորոշ տեղ անց-  
նում է լորձնաթաղանթի միջով և նորից դուրս  
ցցվում աղիքի անցքի մեջ, այնպես վոր ճիճուն  
աղիքի լորձնաթաղանթի վրա շուլալի պես կար  
ե տալիս. շնորհիվ այս հատկության ճիճուն  
ամուր կպչում է աղիքի լորձնաթաղանթին և  
շատ դժվար է նրան հեռացնելն աղիքի միջից:

Մազագլուխ ճիճուն ծծում է մարդու վոչ  
միայն սննդարար հյութերը, այլ և արյունը,  
այդ պատճառով և առաջացնում է արյան պա-  
կասություն:

Հայաստանում ես շատ են տարածված այդ  
ճիճուները և շատ քիչ մարդ կա, վոր չունենա  
2-3 մազագլուխ:

Այս ճիճվի մյուս հատկությունն ել այն է,  
վոր նրա ճվերից առանց հասնելու դուրս են գա-  
լիս ճիճուները. բավական է, վոր այս կամ այն  
կերպ մարդ կուլ տա այդ ճիճվի ճուն և նրա ա-  
ղիքներում ճիճու կը դոյանա. ասկարիդի ճվե-

բի նման ժամանակ չեւ պահանջում հասնելու  
համար, ասկարիդի վորդերի նման (վոքրիկ  
վորդի) չեւ պահանջում արյան մեջ ընկնելու  
հետո կրկին անգամ անցնել սասմոքսնու ապա  
գոռնալ ճիճու, այլ կուլ տալուց հետո անմիշ  
ջապես ձուն աղիքի մեջ դառնում է ճիճու:

Չվի կուլ տալու որից մեկ ամիս անց, աղիքի  
մեջ գոյանում է հասունացած ճիճու և մար-  
դու կեղտոտության մեջ կարելի յէ գտնել նրա  
ձվերը:

### 3. ԹԻՏՈՒԿ (օտրուց) (Նկար 3.)

Սա շատ վոքրիկ և ասեղի պես բարակ վորդ  
է, մատի լայնության կիսին հավասար, և  
մեծ մասամբ յերեխաների աղիքների մեջ է լի-  
նում: Վորդի ձվերը դուրս դալու ժամանակ  
արդեն պարունակում են իրենց մեջ վոքրիկ  
վորդուկները, վորոնք կուլ տալուց հետո շատ  
շուտ սկսում են զարգանալ և ապրել աղիք-  
ների մեջ:

Այս ճիճուներն իրենց ձվերը չեն դնում ա-  
ղիքների մեջ, այլ դուրս են դալիս գիշերը հե-  
տույքի անցքից և ձուն դնում նրա շուրջը մաշ-  
կի վրա: Իսկ այս հանգամանքը պատճառ է  
դառնում հետույքի անցքի մոտի քոր դալուն,

վորպիսի քորն առավելապես ուժեղ է մանր յերեխաների մոտ:

Հետույքի անցքի մոտի քորը յերկու վիճակ ե տալիս. մեկ՝ քորից մաշկը գրգռվում է և



Նկար 3. (Պիտուկ)

ձանդովածքներ տալիս, իսկ յերկրորդն այն եւ,  
վոր յերեխաները քորելուց հետո ճիճվի ձվե-  
րով կեղտոտված ձեռքերը տանում են բերանը  
կամ քսում շրթունքներին և կուլ տալիս ձվերը:  
Վորովհետեւ այդ ձվերն արդեն պատրասի վոր-  
դուկներ են պարունակում իրենց մեջ, ուստի  
նրանք աղիքների մեջ նորից անմիջապես ճիճու-  
յեն դառնում և այսպես անվերջ. այդ ե պատ-  
ճառը, վոր պիտուկ կոչվող ճիճուները լինում  
են հսկայական քանակությամբ:

Հասակավորները վարակվում են նույն ձեռվ:  
Պիտուկի ձուն պետք ե անպատճառ կուլ տալ,  
ձուն պետք ե անցնի ստամոքսով, վոր հետո  
դառնա ճիճու, հսկառակ դեպքում վորդ չի գո-  
յանա:

## ՊԻՏՈՒԿԻ ՏՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ

Ինչպես ասացինք, վորդն առաջացնում է  
հետույքի անցքի մոտ քոր. բայց այդ հերիք չե:

Այդ վորդը յերբեմն անցնում է կույր աղի-  
քի մոտ գտնվող վորդածե յելուստը և բորբո-  
ռում առաջացնում:

## 4. ԿԼՈՐ ՄԱԶ ՃԻՃՈՒ (Трихостронтилус)

Սա կլոր վորդ է միենույն յերկարության,  
ինչ պիտուկը, միայն ավելի բարակ է. նա մա-

զի հաստություն ունի, այդ պատճառով ել կոչվում ե կլորմազ:

Այս ճիճուն ապրում ե մարդու բարակ աղիքների մեջ և խիստ տարածված ե:

Հայաստանում նույնպես շատ ե տարածված. հետազոտությունները ցույց են տվել, վոր յուրաքանչյուր 4 մարդուց մեկը վարակված ե այդ վորդով:

## ԻՆՉՊԵ՞Մ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ԴՐԱՆՈՎ

Վերջին հետազոտությունները պարզեցին, վոր բոլոր վոչխարները վարակված են այս ճիճվով. վորդի ճվերը վոչխարի կթելու ժամանակ կեղտոտության հետ ընկնում են կաթի մեջ և վարակում հում կաթ խմողին, կամ կթողի ձեռքերի վրա յեն ընկնում ու հետո վարակում յերբ վոչխար կթողն անլվա կեղտոտ ձեռքերը տանում ե բերանը:

## ԿԼՈՐՄԱԶԻ ՏՎԱԾ ՎՆԱՍԻ

Ճիճուն սնվում է հիվանդի արյունով, ուստի և առաջացնում ե ուժեղ արյունապակասություն:

## 5. ՏՐԵԽԻՆԱ (ԶԱԳԱՐ)

Սա կլոր ու ամենափոքր ճիճուն է:

Այս ճիճուն գտնվում է մարդու, խոզի, առնետների և շան աղիքների մեջ, բայց շատ կարծ ժամանակով ե մնում աղիքների մեջ:

Եղ ճիճուն բեղմնավորվելուց հետո, վոչթե ձու յե դնում, ինչպես մյուս վորդերը, այլ ծնում ե փոքրիկ վորդուկներ հենց աղիքի պատի մեջ. ծնելուց հետո մայր ճիճուն մեռնում է, իսկ ձագուկներն անցնում են արյանն ու նրա հետ մտնում են հիվանդ կենդանու մկանունքների մեջ, մսերի մեջ և փաթաթվում պատյանով:

Հիվանդ կենդանու մսի մեջ մանր ճիճուները կարող են յերկար ժամանակ մնալ պատյանի մեջ փաթաթված:

Մի՛ուրիշ առողջ կենդանի, որինակ մարդն, ուտում ե հիվանդու խոզի լավ չեփած միսը և կուլ տալիս այդ վորդուկներին. ստամոքսի մեջ պատյանը լուծվում է և վորդուկները դուրս են գալիս տեղից ու անցնում աղիքներին, վորտեղ մի յերկու որից հետո մեծանում են. այդտեղ արուները բեղմնավորում են եգերին ու նորից սկսում վորդի կյանքը, այսինքն տալիս

են նոր վորդուկներ, վորոնք հետո անցնում են  
մկանունքերի մեջ

## ՃԻՃՎԻ ՏՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ

Տրիխինան (Ճագարը) շատ վտանգավոր ճի-  
ճույք է. յերբ ընկնում ե մարդու աղիքների մեջ,  
հիվանդն ունենում ե սրտախառնում, փսիում,  
յուծ, ուժեղ ցավեր (աղիքի պատի ծակելու  
պատճառով). յերբեմն լուծն այնքան սաստիկ  
ե լինում, վոր հիշեցնում ե խոլերան: Հիվանդի  
աղիքի պատի ծակելու պատճառով արյան մեջ  
են անցնում աղիքների մեջ զանվող կեղտոտու-  
թյան թույները, վորից հիվանդն ունենում  
ե գլխացավ, բարձր տաքություն, տենդ,  
անքնություն, մինչև անգամ կորցնում ե գի-  
տակցությունը այսինքն՝ այնպիսի նշաններ,  
վորոնք լինում են վորովայնի տիֆի դեպ-  
քում: Իսկ յերբ ճիճվի ճագուկներն (փոքրիկ  
վորդերը) անցնում են հիվանդի մկանունքներին  
այն ժամանակ առաջացնում են ցավեր ինչպես  
լինում են ռեմատիզմ (խոնավացավ) հիվան-  
դության դեպքում: Յեթե մկանունքներին ան-  
ցած վորդուկների թիվը քիչ է, այն ժամանակ  
նշաններն ել թեթև են լինում, իսկ յեթե շատ են  
այն ժամանակ վարակված մկանունքներն ուո-  
չում են և խիստ ցավում:

Սրանք շատ վտանգավոր ճիճուներ են, վորովհետև մարդու մարմնից հեռացնել չի կարելի, ուստի պետք է շատ զբայլինել:

### 6. ԱՆԿԻԼՈՍՈՄԱ (ԿՅԲԵՐԱՆ ՃԻՃՈՒ)

Սա կլոր ճիճու յէ, յերկարությամբ հավասար է մատի լայնությանը. ունի պինդ և սուր ատամներով բերան. ճիճուն իր ատամներով ծակում է աղիքի պատը, թունավորում հիվանդի արյունը և միենույն ժամանակ ծծում այդ արյունը:

Ինչպես են վարակվում այս նինվով. ճիճվի ձվերն հիվանդի կեղտոտության հետ ընկնում են ջրի կամ հողի մեջ, վորտեղ և դուրս են գալիս ձագուկները. այսպես վարակված հում ջուր խմողը վարակվում է ճիճվի ձագուկներով, փոքրիկ վորդերով, վորոնք աղիքների մեջ դառնում են հասուն ճիճու:

Անկիլոսոմայի ձագուկը կարող է անցնել և հողի միջից վոսաբորիկ ման յեկողի մաշկի մեջ. մաշկից ձագուկն անցնում է արյանն ու հետո թոքերի միջով անցնում է բերանը (ինչպես ասկարիդը), վորտեղից նա անցնում է վարակվածի ստամոքսն ու աղիքները և դառնում հասուն ճիճու:

Անկիլոստոմայի տված վճասները. ճիճուն,  
սուր ատամներով ծակելով աղիքի լորձնաթա-  
ղանթը և ամուր կպչելով աղիքի պատին, սկը-  
սում է ծծել հիվանդի արյունը, և ծծում է այն-  
քան ուժեղ, վոր հիվանդը սաստիկ արյունա-  
պակաս է լինում. բացի այդ ճիճուն թունավո-  
րում է հիվանդի կազմվածքն իր արտադրած  
թույնով:

---

## II. ՏԱՓԱԿ ՃԻՃՈՒՆԵՐ

Մենք արդեն վերն ասացինք, վոր տափակ  
ճիճուները բաժանվում են 2 կարգի՝ յերիգոր-  
դեր և ծծողներ:

Յերիգորդն ունի գլուխ և պարանոց, վո-  
րից և առաջանում են կտորները, ճիճվի անդա-  
միկները, վորոնք հասունանալով մեկը մյու-  
սին բեղմնավորում են և տալիս են ճվեր:

Այստեղ ավելորդ չե մատնանշել այն հան-  
դամանքի վրա, վոր ճիճուն հիվանդի աղիքների  
մեջ սնվում է վոչ թե գլխով, այլ անդամիկների  
մարմնի ամբողջ մակերեսույթով. բնու-  
թյունը տվել է ճիճվին այնպիսի ընդու-  
նակություն, վոր նա ապրելու համար  
սնվում է իր անդամիկների ամբողջ մակերե-  
վույթով. գլուխն ունի կարթեր և ծծան-



Նկար 4. (իսոզի տափակ ճիճու)

Ներ աղիքի պատին ամուր կողշելու համար. պարանոցից զարգանում են վոքրիկ անդամիկները, փորոնք իրենց մարմնի մակերեսութով սնվում են աղիքների հյութով, հաստանում են, բեղմնավորում մեկը մյուսին և ձու տալիս, իսկ ինչպես ե ձուն ճիճու դառնում, մենք արդեն գիտենք վերը գրածից :

Այժմ անցնենք այն հարցին թե քանի տեսակ յերիզորդ կա. մեզ հայտնի յեն վեց տեսակ յերիզորդեր, վորոնց նկարագրությանը և անցնում ենք մենք:

1. Տավարի յերիզորդ, վորի յերկարությունը 6—15 արշին ե և վորի միջնորդը կովն է կամ յեզր. Հայաստանի տրոպիկական ինստիտուտում կար մի հիվանդ, վորն ուներ 15 հատ ճիճու. Բոլորի ընդհանուր յերկարությունը մոտ 150 արշին եր:

2. Խոզի յերիզորդ (նկար 4.), վորը նման է տավարի յերիզորդին, բայց կարճ և նրանից ե ունի 3—6 արշին յերկարություն. սրտ միջնորդը խոզն է:

3. Գդմանման յերիզորդ, վորի անդամիկները շատ նման են դդմի կորիզին, տպրում ե շան, կատվի և մարդու աղիքների մեջ. Նրա յերկարությունը 20—25 սանտիմետր է (մոտ  $\frac{1}{2}$  արշին) :

Այս ճիճվի միջնորդն է . . . ի՞նչ եք կարծում  
ո՞վ . . . լուն :

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ԱՅՍ ՃԻՃՎՈՎ :

Ճիճվի կտորները գուրս են գալիս շան,  
կատվի և մարդու աղիքներից կեղտոտության  
հետ և քայքայվելիս թափում հողի մեջ ձվիկ-  
ները . լուն ուտում ե այդ ձվիկները և նրա մեջ  
զարգանում ե փոքրիկ վորդուկը, ինչպես կովի  
և խողի մեջ :

Շունը, կատուն ուտում են այդ լվին ու վա-  
րակվում . լուն հալչում ե շան կամ կատվի ստա-  
մոքսում, իսկ լվի մարմնի մեջ յեղած ճիճվի  
յերկրորդ փուլը (փոքրիկ վորդուկը) զարգա-  
նում ե շան կամ կատվի աղիքների մեջ և դառ-  
նում հասուն ճիճու :

Մարդը նույնպես կարող է վարակվել լվից,  
յեթե այս կամ այն կերպ վարակված լուն ընկնի  
ուտելիքի և խմելիքի մեջ և անցնի մարդու  
ստամոքսը նշանակ նյութերի հետ :

4. Թօգուկ յերիգորդ . սա տափակ և շատ  
փոքրիկ ճիճու յե, յերկարությունը մատի լայ-  
նության . գտնվում ե մարդու աղիքների մեջ .  
սա վոչ մի ուրիշ միջնորդի կարիք չունի :

իիշպե՞ս են վարակվում. ճիճվի ճռն՝ կուլ  
դնալուց հետո կանգ ե առնում աղիքների թավե-  
րի մեջ և հենց դրանց մեջ կատարում ե իր յեր-  
կրորդ փուլը, այսինքն՝ վոքրիկ վորդուկը գո-  
յանում ե հենց աղիքների թավերի մեջ. հենց  
վոր զարդանում ե, պատում ե աղիքի թավը և  
ընկնում աղիքի մեջ ու մեծանալով գառնում իս-  
կական ճիճու, վորը գլխի կարթերով կպչում ե  
աղիքի պատին և սկսում տալ կտորներ. այս  
վերջինները հասունանում են ու նորից տալիս  
ճվեր, վորոնք նորից կարող են մտնել աղիքների  
թավերի մեջ և գոյացնել նորանոր ճիճուներ.  
այնպես վոր 2 շաբաթվու ընթացքում մեկ ձվից  
կարող են առաջանալ հարյուրավոր և հազարա-  
վոր թզուկ յերիզորդներ:

Թզուկ յերիզորդով առանձնապես վարակ-  
վում են յերեխանները. այս ճիճվով հիվանդ յե-  
րեխանները լինում են քմահաճ, ներվային,  
ծույլ, վատ են սովորում, ունենում են արյան  
պակասություն, յերբեմն հիվանդ յերեխան  
ունենում ե ցնցումներ. իսկ յերբ թզուկ յերի-  
զորդները շատ են լինում, այն ժամանակ հի-  
վանդն այնպես է թուլանում և քայլայվում,  
վոր նույնիսկ կարող ե և մեռնել:

5. Եխինոկոկկի. սա իր մեծությամբ պիտուկի չափ է. ժապավենաձև ճիճուն ունենում է 3-4 անդամիկ, վորոնցից վերջինը լրջած է լինում ձվերով. այս ճիճուն ապրում է միայն շան աղիքների մեջ և խիստ-տարածված է, մանավանդ անասնապահների մեջ։ Այս ճիճվի միջնորդը մարդն է և ուրիշ կենդանիները։

Ինչպես են վարակվում. ճիճվի ձվերը դուրս են գալիս շան աղիքներից կեղտոտության հետ միասին և ընկնում խոտի ու կանաչեղենի վրա. կենդանիներն ուտում են կեղտոտված խոտը, իսկ մարդիկ կեղտոտված կանաչեղենն ու վարակվում։

Եխինոկոկկի ձուն ստամոքսից անցնում է աղիքներին իսկ այստեղից ել արյանը և, շրջագայելով արյան հետ կանդ է առնում վարակված կենդանու, ինչպես և մարդու, մի վորեե գործարանում, սովորաբար լյարդի կամ թոքերի մեջ. Եխինոկոկկի ձուն կանդ առած գործարանի մեջ սկսում է զարգանալ և այդտեղ կատարվում է ճիճվի յերկրորդ փուլը. այսինքն գոյանում է ճիճվի գլուխն իրեն կարթերով. ճիճվի գլուխը շրջապատվում է պատյանով, գոյանում է պարկ, մեջը լի հեղուկով. այդ պարկի

մեջ կան մտնր պարկիկներ, վորոնք լցվում են եխինոկոկկի հարյուրավոր ու հազարավոր գըլուխներով:

Մարդը կարող է վարակվել շանը համբուրելուց և շանը ձեռք տալուց հետո անլվա ձեռքերով կերակուր ուտելուց կամ կեղտուված ձեռքերը շրթունքներին քսելուց:

Յեթե այդ պարկով հիվանդ գործարանը, փոխանակ վոչնչացնելու, տանք շանն ուտելու, շան աղիքների մեջ կուլ տված ճիճվի գլխներից կողոյանան ճիճուներ, եխինոկոկկներ, վորոնք ձու գնելով կրվարակեն նորանոր մարդիկ և կենդանիներ:

Զպետք ե մոռանալ, վոր ճիճվի յերկրորդ փուլի պարկը հանդերձ իր բշտիկներով ու ճիճվի գլխներով վոչ մի կենդանու համար վտանգավոր չե, բացի շնից, ուստի բոլորովին անթույլատրելի յե կերակրել շներին մի վորեւ մորթած կենդանու գործարանով, վորը պարունակում ե իր մեջ եխինոկոկկի բշտիկներով լի պարկը, որինակ՝ թոքերով, լյարդով և այլն. Շան աղիքների մեջ կողոյանա ճիճուն, վորը կարող է վարակել մարդկանց և կենդանիներին:

Ընթերցողներից շտուրը տեսած կը լինեն մորթած վոչխարի կամ տավարի թոքերի և

Այսրդի մեջ զանազան մեծության պարկեր հեռուկով լցված։ Դրանք հենց եխինոկոկկի յերկրորդ փուլի պարկերն են, վորոնք լի յեն ճիճվի գլխներով։ այդ տեսակ գործարանը վոչթե միայն մարդը չպետք է ուտի, այլ և չի կարելի տալ շանը։

Եխինոկոկկի տված վնասները. հիվանդի փորը ցավում ե, դեղնախտ ե ստանում, փորի մեջ ջուր ե հավաքվում, լյարդն ուռչում ե, ուռչում ե և փորը. հիվանդի փորը հաճախ լուծում ե, հիվանդը նիհարում ե մեռնում ե ուժասպառությունից. բժշկելու համար պետք ե հիվանդին ոպերացիա անել՝ հեռացնել եխինոկոկկի գլխներով լի պարկը, վոր հիվանդը փրկվի։

6. Ուղեղի յերիզորդ. այս ճիճուն հասուն վիճակում ապրում ե շան բարակ աղիքների մեջ և յերկարությունը <sup>3/4</sup> արշին ե. ձվերը շան կեղտոտության հետ դուրս են գալիս և պատահմամբ ընկնում ուտելիքի և խմելիքի մեջ ու վարակում մարդուն և կենդանիներին։

Ի՞նչ ե կատարվում վարակվելուց հետո. կուլ տված ձվից բարակ աղիքի մեջ դուրս ե դալիս փոքրիկ վորդուկ, վորը ծակում ե աղիքի պատն և ընկնում արյան մեջ։ Արյան

Հետ անցնում ե մարդու կամ վոչխարի ուղեղը։ Այստեղ առաջացնում ե մի բշտիկ աղավնու կամ հավի ձվի մեծության, վորը լցվում է բազմաթիվ գլխներով։ Յեթե այդ տեսակ ուղեղը տան շանն ուտելու, շան բարակ աղիքների մեջ կը գոյանա իսկական ճիճուն։

Ճիճվի տված վճասները. ճիճվի վորդուկե բշտիկը վոչխարի գլխի ուղեղի մեջ առաջացնում ե վոչխարի «պտույտ» կոչվող հիվանդությունը. իսկ յերբ մարդու ուղեղի մեջ ե, հիվանդի վրա առաջ են գալիս այն տեսակ նշաններ, վորոնք սովորաբար առաջ են գալիս ուղեղի մեջ գոյացած մի վորեւ ուռուցքից, — նայած թե ուղեղի վոր մասն ե վնասված, այսինքն՝ ուղեղի վոր մասումն ե դանվում ճիճվի գլխներով լի պարկը։

Հիվանդ մարդը մեծ մասամբ հաճախ ուշաթափվում ե, վսխում ե, առաջ են գալիս ուժեղ գլխացավ, ցնցումներ և անդամալություն։

### ԾԾՈՂ ՃԻՃՈՒԵՐ

Այս ճիճուները նույնպես տափակ վորդերին են պատկանում և կոչվում են ծծող, վորովհետեւ ունեն ծծող գործարան. այդ ճիճուներն իրենց ծծիչով կպչում են այն գործարանին, վորի

մեջ գտնվում են և ծծում են հիվանդ մարդու կամ կենդանու արյունը կամ հյութերը:

**Ծծող ճիճուներն առեն միջնորդ...**

Ինչպես են վարակվում ծծող նինուներով. — ճիճուն ճիճուն կենդանիների աղիքներից դուրս են զալիս կեղաստաթյան հետ և ընկնում լճակի կամ առուների մեջ:

Զրի մեջ ընկած ճիճուն դուրս և զալիս վոքրիկ վորդուկ, այս վերջինը մըսնում և խխունջի մեջ, վորը և ծծողների միջնորդն է. Խխունջի մարմնի մեջ ժամանակի ընթացքում նրանք մի վոքր մեծանում են և փոփոխվում: Շուտով այդ վոչ հասուն վորդուկները դուրս են զալիս խխունջի միջից և ընկնում ջրի մեջ. մի վորեւե կենդանի խմում և այդ վարկված ջուրը և վարակվում ճիճուն վորդուկներով, վորոնք աղիքներից անցնում են արյանը, կանգ են առնում լյարդի մեջ լեզու խողովակիկներում և հասուն ճիճուն դառնում: Լեզու խողովակիկների մեջ ձու յեն զնում. Ճիճուն լեզու հետ լեզվատար խողովակներով անցնում են աղիքները: Մի վորոշ ժամանակից հետո ճիճուն ճիճուն դուրս են զալիս հիվանդ կենդանու աղիքներից ընկնում ջրի մեջ ու վարձյալ վարակում ուրիշ կենդանիների և անպատճառ

՚իխունջից Հետո։ Մարդիկ վարակվում են  
ձիճվի ձվերով կեղտոտված ջուր խմելուց կամ  
կեղտոտված բանջարեղեն ուտելուց։  
Ծծող ձիճուներից Հայոստանում կան։



Նկար 5.

1. Լյարդի ծծող նինու. (Նկար 5) այս  
ձիճուն <sup>է!</sup> վերշոկ յերկարության ե. ապ-

բում ե վոչխարի, այծի, կովի յերբեմն և մարդու լյարդի մեջ։ Մարդիկ և կենդանիները վարակում են վերը հիշված յեղանակով խմելու ջրից կամ կանաչեղենից։

2. Լյարդի նշտարիկ։ այս ճիճուն նույնպես լյարդի մեջ է ապրում։ Ճիճվի յերկարությունը հավասար է մեկ մատի լայնության կիսին։

Լյարդի նշտարիկով վարակման յեղանակը նույնն է, ինչ վոր լյարդի ծծողինը։

Ի՞նչ վճառներ են տալիս նիհուները։

Հիվանդն ունենում է գեղնություն, սակաւարյունություն, փորացավ, լուծ, ջուր և հավաքվում հիվանդի փորի մեջ։ և այս բոլորի հետեւ վարդը՝ մարդ թույլանում է և շատ շուտ արկարանում ուրիշ հիվանդություններով։

Վոչխարների «քափանակ» կոչվող և Հայաստանում հայտնի հիվանդությունը առաջ է դալիս մատնանշած ծծող ճիճուներից։

### ԿՈՒԻՎ ՃԻՃՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Վերն ասածներից յերեսում է, թե ինչպիսի վնաս են հասցնում մարդուն ճիճուները, թե ինչպես են նրանք քայլայում մարդու առողջությունը։ Դրա համար ել ամեն մարդ պարտավոր է իր և իրեն շրջապատողների առող-

ջության տեսակետից աշխատել չվարակվել  
նրանցով։ Վորովհետեւ, ինչպես վերը տեսանք,  
վորդերը մարդու մարմնի մեջ չեն բազմանում,  
այլ այնտեղ միայն ձռւ յեն դնում, վորոնք  
հետո դուրս են գալիս, ուրեմն մարդը կտ-  
րող է վարակվել միմիայն արտաքին աշխար-  
հից։ Գիտենալով ճիճուների կյանքը, նրանց  
բազմանալու ձևերը և մարդկանց վարակվելու  
յեղանակը, հեշտությամբ կարող ենք հասկա-  
նալ թե ինչ միջոցներ պետք են գործադրել ճի-  
ճուներով չվարակվելու համար։

Ճիճուների դեմ պայքարը պետք է տանել  
յերկու ուղով՝ բուժման և կանխարգելման։

## 1. ԲՈՒԺՈՒՄ

Ճիճուներով հիվանդները պետք է տնօղայ-  
ման բժշկվեն, վոր առողջանան և աշխատան-  
քից չպրկվեն. Վերը գրածից լավ հայտնի յե,  
թե ինչ վնասներ են տալիս մարդուն, ինչ հի-  
վանդագին նշաններ են յերեւում մարդու վրա,  
հայտնի յեւ այն, վոր ճիճուները հաճախ մահ-  
վան պատճառ են դառնում, ապա ուրեմն հի-  
վանդը պետք է անպայման բժշկվի, վոր հետ  
բերի կորցրած առողջությունը և փրկվի մա-  
հից։

Բացի այդ չպետք է մոռանալ, վոր հիվանդը պատճառ է դառնում և ուրիշների վարակման. ուրեմն հիվանդը պետք է բժշկվի և նրա համար, վոր ուրիշների վարակման պատճառ չը դառնա. յուրաքանչյուր հիվանդ պետք է գիտակցություն ունենա և բժշկվի վոչ միայն իր առողջանալու համար, այլ և ուրիշներին չվարակելու համար:

Իսկ ինչ վերաբերում է բժշկվելու միջոցներին, պետք է ասել, վոր կան ճիճվահալած հատուկ գեղեցիք և յուրաքանչյուր ճիճվին համապատասխան, ուստի ամեն մի հիվանդ առանց հետաձգելու պետք է դիմի բժշկին, բացատրի ինչ տեսակ ճիճու ունի ինքը. յեթե ճիճվի տեսակը հայտնի չե, պետք է կղկղանքը տա քննության, վորից հետո կպարզվի ճիճվի տեսակը. այս նրա համար ե, վոր բժիշկը կարողանա տայ ճիճվին հալածող, նրան սպանող գեղը. իսկ ստացած գեղը հիվանդը պետք է ընդունի և պետք է անպատճառ ընդունի այնպես, ինչպես կ'ասի բժիշկը:

## 2. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կանխարգելման միջոցները յերկու տեսակ են. առաջինը՝ հասարակական միջոցներ, այսինքն՝ այնպիսի միջոցներ, վորոնք պետք է գործադրեն պետությունը և հասարակությու-

նը հանձինս առանձին կոմիսարիատների, գործկոմների, քաղաքային և գյուղական խորհուրդների։ Յերկրորդը անհատական միջոցներ, վորոնք պետք է գործադրի մեզանից ամեն մեկը, վոր ինքը չվարակվի և ուրիշներին ել չվարակի։

## ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Հասարակական միջոցներից առաջին տեղը բռնում է գյուղի և քաղաքի ազգաբնակությանը խմբելու մաքուր ջուր մատակարարելը և այն ել այնպիսի քանակությամբ, վոր նա վոչ միայն բավական լինի խմբելու, այլ և առհասարակ ամեն տեսակի անային գործածության համար, այսինքն լվացվելու, ամանները լվանալու, լվացք անելու և այլն։ Դրա համար քաղաքներում պետք է ջրմուղներ շինել, իսկ գյուղերում պետք է աշխատել, վոր գյուղացիների գործածական ջուրը՝ աղբյուրները, առուները և ջրհորները մաքուր պահպեն, ըսկեղտութեն, մանավանդ մարդկանց և կենդանիների կեղտություններ չնկնեն նրանց մեջ։

2. Պետք է ուշադրություն դարձնել արտաքնոցների կանոնավորության և մաքրության վրա։ Քաղաքներում անպատճառ պետք է անցկացնել կոյուղի։ Մեծ նշանակություն ու-

նեն փողոցների մաքրության համար մանա-  
վանդ հասարակական արտաքնոցները։ Այդ ար-  
տաքնոցները պետք է չառ մաքրու պահել, վոր  
նրանք վարակման կենտրոններ չգտնան։  
Գյուղերում պետք է գյուղխորհուրդները վո-  
րոշում հանեն, վոր յուրաքանչյուր տուն ունե-  
նա յուր արտաքնոցը, վոր նրանք բաց չլինեն,  
հորերը խոր լինեն և հաճախ մաքրվեն կամ  
յինթարկվեն ախտահանման։

3. Սպանդանոցներում պետք է խիստ հրա-  
կողություն հիմնել, վոր վարակված միսը  
չվաճառվի, այլ վոչնչացվի, և մարդ-  
կանց ու կենդանիների համար վորպես սնունդ  
չգործածվի, մանավանդ շներին չորվի, վորոնք  
հանդիսանում են եխինոկոկկի աղբյուր մարդ-  
կանց և ուրիշ կենդանիների վարակման հա-  
մար։

4. Պետք է խիստ առողջապահական հոկո-  
ղություն ունենալ բնակարանների վրա և ազ-  
գարնակությունից պահանջել՝ մաքուր և կանո-  
նավոր պահել բնակարանները, բակերը և ար-  
տաքնոցները։

5. Յերբ կենդանիների վարակումը լայն  
չտիեր և բնգունում պետք է փոխել արտա-  
ռեղբ, խոկ եխինոկոկկի արածվելու գեղքում  
վոչնչացնել նաև հովիվների շներին։

6. Անհրաժեշտ է մասնակից անել կոմյերիտմիությանը և աշակերտությանը առողջապահական աշխատանքներին, կազմակերպելով հասուլ առողջապահական բջիջներ, վորոնք ազգաբնակությանը կբացատրեն մաքրության կուլտուրական առողջապահական նշանակությունը և կհետևեն հասարակական առողջապահությանը, թե քաղաքներում և թե գյուղերում:

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Զկեղոստել (կղկղանքով) ամեն տեղ:
2. Արտաքնոցներում մաքրություն պահպանել և գործածել թուղթ: Զքորել հետույքի անցքը՝ յեղունզները կարճ պահել և չկծոտել. կեղտոտ ձեռքով ուրիշին ձեռք չտալ:
3. Հում, լավ չտապակված կամ լավ չփած միս (տավարի, վոչխարի, ձկնի, իսպի և այլն) չպործածել:
4. Առվի հում ջուր չխմել, մինչև անզամ չվացվել նրանով և ամաններ չլվանալ: Միայն աղբյուրի ջուրը կարելի յե հում խմել. հոկել, վոր աղբյուրի ջուրը չկեղտոտվի, ջրամանը մաքրուր պահել և ծածկած:
5. Զուտել այնպիսի բանջարեղեն և պը-

տուղներ, վորոնք լով չեն լվացած մաքուր  
ջրով:

6. Զգույշ լինել տնային կենդանիներից,  
չներից ու կտոռներից, չհամբուրել նրանց;  
մանավանդ դունչը. նրանց ձեռք տալուց հետո  
ըլացվել:

7. Պահպանել բնակարանի, մարմնի, սպի-  
տակեղենի և հազուստի մաքրությունը, վոր  
միջատներ, լվեր ու ճանճեր չլինեն:

8. Բնդհանուր անկողնում չքնել և միե-  
նույն ամանից մի քանի հոգով չուտել:

9. Զեռքերը շուտ շուտ լվանալ, մանա-  
վանդ ուտելուց տուած, չխնայելով ջուր և սա-  
պոն:

Ուրեմն ընթերցող հիշի՛ր, զգուշացիր ճի-  
ճուներով վարակվելուց, իսկ յեթե ունես այդ-  
պիսին՝ բժշկվիր, վոր ազատվես առողջու-  
թյանդ համար վնասակար մակաբույժներից և  
ուրիշների վարակման պատճառ չդառնաս:





**Հ. Խ. Ա. Հ. ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ-  
ՅՈՒՆԵՐԸ**

Բժշկագիտական բառարան

թժ. Արծունու . . . . . զ. 3n.

Բժշկական հանդես № 1. . . . » 1n.

Հայաստանի տրոպիկական

ինստիտուտի աշխատությունները » 1n. 50կ.

**ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ**

1. Պունիկ Դարոյի դասը (սպառված)	
2. Սիթիլիս	»
3. Մալարիա	»
4. Առողջապահական հուշատեսր	5կ.
5. Մաւելի մի քանի աւրածված հի- վանդությունները նկարներով	10 »
6. Նվեր գեղջկուհուն	10 »
7. Պալարախ	10 »
8. Ճիճուներ	10 »

Եռևանի կիանձնութիւն տպագրության

«Տրախոմա» գրքույկը

Լույս է տեսել և վաճառվում է

— Զ Ե Ր Ն Ա Ր Կ —

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ » 1n. 30 »

Ցանկացողները պետք է դիմեն Առժողկոմատի  
Սանիտ-Լուսավորության լենթաբաժնին

Ուստի բաղաքներից պետք է դիմեն հետևյալ  
հասցեով

Երևան (Արմենիա)

Народному Комисариа


Спандарян № 27

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040300

[094]



ԳԻՆՅ 10 ԿՈՎ.